ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

16.02.2018թ

ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/92

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2017թ. թիվ 03/26-3/23860-17 գրությամբ Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 18.12.2017թ. թիվ ԴՎԱ/4699 գրության հիման վրա, 20.12.2017թ. թիվ 03/26-3/23860-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 21.12.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/23943-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ին, սակայն վերջինիս կողմից դիրքորոշում չի նեչկայացվել:

Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 25.12.2017թ. ժամը 11:00-ի և 28.12.2017թ. ժամը 10:30-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

3. **ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 18.12.2017թ. թիվ ԴՎԱ/4699 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները՝ համակարգի միջոցով (armeps.am) ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել են երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը ընդհանրապես չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը վերջինիս հայտը մերժել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի Խորհրդի 25.12.2017թ. ժամը 11:00-ի և 28.12.2017թ. ժամը 10:30-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/92 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/92 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ն հայտ է ներկայացրել:

2. Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/1» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Սույնով Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ ***անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):***

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, որին 07.12.2017թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է ներկայացնելու հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ի հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացվել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2017թ. թիվ 03/26-3/23860-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.12.2017թ. թիվ ԴՎԱ/4699 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների

բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: ***Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում ***փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի***

արձանագրությամբ կայացված որոշմամբ Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ի հայտը մերժել է, դադարեցնելով վերջինիս մասնակցությունը ընթացակարգին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն, չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի հետևանքով Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակում խախտել է Օրենքի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, և որի հետևանքով Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ի հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին դադարեցվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2017թ. թիվ 03/26-3/23860-17 գրությամբ Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 26501769) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և Սեյրան Հարությունյան Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ